ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

1. **ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2024 թվականի առաջին եռամսյակի կատարման արդյունքների մասին:**

2024թ. ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել են 78.3 %-ով, նախատեսված 1,042,384.4 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 815,799.7 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմել է – 226,584.7 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2024թ. բյուջեների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

(հազար ՀՀ դրամ)

Եկամուտների անվանումը	2024թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Անշարժ գույքի հարկ	189,278.5	110,345.4	- 78,933.2	58.3
Գույքահարկ փոխադրամիջոցներից	461,322.8	313,729.6	- 147,593.2	68.0
Պետական տուրք	16,743.3	17,642.2	898.9	105.4
Տեղական տուրք	43,663.2	69,332.8	25,669.6	158.8
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	**91,706.9**	**65,325.9**	**- 26,381.0**	**71.2**
ա/ հողի վարձավճար	74,309.0	47,917.6	- 26,391.4	64.5

բ/ գույքի վարձավճար	17,397.9	17,408.3	10.4	100.1
Այլ եկամուտներ	239,669.7	239,423.9	- 245.9	99.9
Ընդամենը սեփական եկամուտներ	1,042,384.4	815,799.7	- 226,584.7	78.3

Ըստ համայնքների 2024 թվականի բյուջեների նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

(հազար ՀՀ դրամ)

h/h	Համայնքների անվանումը	2024թ. սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1.	Անի	55,006.2	62,369.7	7,363.5	113.4
2.	Արթիկ	134,484.6	138,149.6	3,665.0	102.7
3.	Ամասիա	22,128.8	21,306.6	- 822.2	96.3
4.	Աշոցք	30,597.5	24,927.0	-5,670.5	81.5
5.	Գյումրի	661,315.8	486,371.4	- 174,944.4	73.5
6.	Ախուրյան	138,851.5	82,675.5	- 56,176.0	59.5

Մարզի համայնքներից՝ 2024 թվականի սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ախուրյան համայնքում՝ 59.5%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 69.6% կամ նվազման տոկոսը կազմել է 10.1:

Մարզի թվով 2 համայնքներ չեն ապահովել 2024 թվականի արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 78.3%-ը:

ՀՀ պետական բյուջեով մարզի համայնքներին 2024 թվականի նախատեսված 2,338,015.3 հազ. դրամ «Դոտացիան» ամբողջությամբ ֆինանսավորվել է:

2024 թվականին ՀՀ պետական բյուջեից մարզպետի աշխատակազմի ենթակա կազմակերպություններին նախատեսված ֆինանսավումը լրիվությամբ հատկացվել է:

Մարզի համայնքներին ՀՀ պետական բյուջեից 2024 թվականի առաջին եռամսակի ընթացքում «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով ՀՀ կառավարության թվով 2 որոշումներով հատկացվել է 503,496.4 հազ. դրամ, որից փաստացի համայնքներին ֆինանսավորվել է 459,781.3 հազ. դրամ, կամ 91.3%:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
Լիպարիտ Մարտիրոսյան

2. 2023 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզում փաստացի իրականացված սուբվենցիոն ծրագրերի և 2024 թվականի համար ներկայացված ամբողջական փաթեթների վերաբերյալ

2023 թվականին իրականացվել է 28 ծրագիր (163 ենթածրագիր), որի ընդհանուր արժեքը կազմում է 5,131,340,339 մլն դրամ (ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինը կազմում 2,697,950,402 դրամ՝ 52.6%:

Ըստ համայնքների

N	*համայնք*	*ծրագրի անվանումը*	*Ընդհանուր արժեքը, ըստ պայմանագրի/նախահաշվի ՀՀ դրամ*	*Պետական բյուջեից հատկացված գումարը, ՀՀ դրամ*	*Ծրագրի հակիրճ նկարագրությունը*
1	Գյումրի	Գյումրի համայնքին պատկանող շենքերի/շինություններին արևային համակարգի տեղադրում	745,615,041	447,369,000	1773 կՎտ հզորության ֆոտովոլտային կայան
2	Գյումրի	Գյումրի համայնքի 22 փողոցների հիմնանորոգում, հրապարակի հիմնանորոգում և	2,199,441,563	1,048,678,091	9.455 կմ

		Կոմիտաս փողոցի ասֆալտապատում			
3	Գյումրի	Բազմաֆունկցիոնալ տեխնիկայի ձեռքբերում	151,068,000	67,980,600	2 հատ բազմաֆունկցիոնալ ամբարձիչ SUNWARD, 1 հատ ինքնաթափ բեռնատար F3000
4	Գյումրի	Գյումրի համայնքի սոցիալական բնակարանների և մշակույթային կենտրոնների վերանորոգում	85,043,976	37,543,000	1564 քմ 14 հատ
5	Գյումրի	Գյումրի համայնքի ՀՈԱԿ-ների և բակերի կարիքների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում (նստարաններ, աղբամաններ)	10,175,736	4,579,100	23 մանկապարտեզների և 14 ՀՈԱԿ կահավորում
6	Գյումրի	Գյումրի համայնքի կարիքների համար բազմաֆունկցիոնալ տեխնիկաների և սարքավորումների ձեռքբերում (2 խոտհնձիչ, 1 հողը փխրեցնող սարք, 1 աղբատար և 1 բեռնատար մեքենաներ)	130,136,800	58,561,600	աղբատար մեքենա, ամրաշրջանակ, բազմաֆունկցիոնալ ճանապարհային մեքենա և լուսացույցեր
Ընդամենը			**3,321,481,117**	**1,664,711,391**	**50,1%**
7	Ախուրյան (Մարմաշեն)	ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Շիրակ գյուղում 2 խմբասենյակով 46 երեխայի համար նախատեսված մանկապարտեզի կառուցում	24,706,807	14,824,700	46 երեխա

8	Ախուրյան (Մարմաշեն)	ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Վահրամաբերդ գյուղի մանկապարտեզի շենքի կառուցում	97,038,271	56,706,151	50 երեխա
9	Ախուրյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բենիամին բնակավայրի ոռոգման ցանցի հիմնանորոգում	85,669,702	55,685,300	2.585 կմ, ոռոգվող տարածք 40 հա, 162 տնտեսություն
10	Ախուրյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կառնուտ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում՝ 2 փուլով	154,093,142	107,865,200	50 երեխա
11	Ախուրյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի՝ Բենիամին, Ազատան, Երազգավորս, և Ախուրյան բնակավայրերի ներբնակավայրային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ **(Ազատան, Երազգավորս, Ախուրյան բն Շահբազյան փողոց)**	181,448,114	80,301,280	2.319 կմ
12	Ախուրյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայրի մանկապարտեզի շենքի	179,590,286	125,713,200	50 երեխա

		կառուցման աշխատանքներ՝ 2 փուլով			
Ընդամենը			**722,546,322**	**441,095,831**	**61%**
13	Արթիկ	Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Տուֆագործների և Թամանյան փողոցների ասֆալտապատում և Շիրակացի փողոցի մայթի կառուցում	116,138,700	55,069,700	1.033 կմ
14	Արթիկ	Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի թվով 6 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	69,852,505	31,433,600	2786 քմ 700 շահառու
15	Արթիկ	Արթիկ համայնքի Արթիկ, Արևշատ, Նահապետավան, Պեմզաշեն, Սարալանջ և Հառիճ բնակավայրերի ճանապարհների տուֆ քարով սալապատում (Հառիճ բն)	41,754,670	25,052,800	3 կմ (0.6 կմ)
16	Արթիկ	Արթիկ համայնքի Արթիկ, Հայկասար, Հայրենյաց, Պեմզաշեն, Սարատակ, Վարդաքար, Տուֆաշեն, Արևշատ, Հովտաշեն և Գետափ բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում	71,185,955	39,150,100	350 լուսատու, 12.2 կմ երկարությամբ
17	Արթիկ	Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի թվով 15 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	120,883,283	54,388,758	2350 շահառու
Ընդամենը			**419,815,113**	**205,094,958**	**48,9%**

18	Անի	Լանջիկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման ներքին ցանցի կառուցում	156,237,649	100,216,057	11.293 կմ 953 շահառու
19	Անի	Անի համայնքի կարիքների համար բազմաֆունկցիոնալ տեխնիկաների ձեռքբերում (էքսկավատոր բեռնիչ)	43,980,300	26,388,100	ավտոաշտարակ, ավտոբուս, էքսկավատոր-բեռնիչ, աղբատար
Ընդամենը			**200,217,949**	**126,604,157**	**63,2%**
20	Աշոցք	Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրում պուրակի կառուցման աշխատանքներ (2 փուլ)	121,010,000	52,578,100	3730 քմ
21	Աշոցք	Աշոցք համայնքի Աշոցք, Սիզավետ, Ցողամարգ, Գոգհովիտ, Արփենի, Մուսայելյան, Փոքր Սարիար և Սալուտ բնակավայրերի համայնքային կենտրոնների նորոգման և վերակառուցման աշխատանքներ	63,893,985	31,947,355	1762 քմ
22	Աշոցք	Աշոցք համայնքի Արփենի, Կաքավասար, Բավրա և Սարագյուղ բնակավայրերի խմելու ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ	32,370,000	21,040,500	2.8 կմ, 1396 շահառու
23	Աշոցք	Աշոցք համայնքի Թավշուտ բնակավայրում ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ	71,854,300	50,226,400	400 հա, 1.5 կմ, 85 տնտեսություն
24	Աշոցք	ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա, Սարագյուղ,	45,850,980	27,510,600	2.21 կմ

		Զույգաղբյուր բնակավայրերում բնական գազի ներքին ցանցի կառուցում			
Ընդամենը			**334,979,265**	**193,302,955**	**57,7%**
25	Ամասիա (Արփի)	ՀՀ Շիրակի մարզի Արփի համայնքի Աղվորիկ, Բերդաշեն, Զարիշատ, Զորակերտ գյուղական համայնքների ջրագծի կառուցում	23,850,190	16,689,410	3.75 կմ 676 շահառու
26	Ամասիա (Արփի)	Արփի համայնքի Աղվորիկ, Արդենիս և Զարիշատ բնակավայրերի համայնքային կենտրոնների նորոգում	33,798,760	16,889,400	440 քմ
27	Ամասիա	ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի 2-րդ փողոցից մինչև 24 փողոցն ընկած հատվածի ասֆալտապատման աշխատանքներ (2 փուլ)	65,748,623	38,309,500	0.55 կմ
28	Ամասիա	ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արդենիս և Զարիշատ բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի կառուցում	8,903,000	5,252,800	69 լուսատու, 1.89 կմ երկարությամբ
Ընդամենը			**132,300,573**	**77,141,110**	**58,3%**

Ըստ ոլորտների

Ծրագրի ոլորտը	**Ծրագրերի քանակ**	**Ծրագրի սկզբ. (դրամ)**	**Արդյունք**
Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	3	212,457,839	17.8 կմ, 3025 շահառու
Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	2	157,524,002	440 հա,

			247 տնային տնտեսություն
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, ասֆալտապատում	1	41,754,670	13.4 կմ
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, սալարկմամբ, խճապատմամբ	4	2,562,777,000	0.6 կմ
Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	2	80,088,955	413 լուսակիր 14 կմ երկարությամբ
Վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում	1	745,615,041	1773 կՎտ հզորության ֆոտովոլտային կայան
Բնակավայրերի գազաֆիկացում	1	45,850,980	2.2 կմ
Նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում/նորոգում, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերում	4	455,428,506	196 երեխայի համար
Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում	2	190,735,788	3050 շահառու
Մեքենասարքավորումների և գույքի ձեռքբերում	4	335,360,836	9 մեքենա, 200 գույք
Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում	3	182,736,721	3766 քմ
Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում	1	121,010,000	3730 քմ

2024 թվականի համար ներկայացված ամբողջական փաթեթների վերաբերյալ

ՀՀ կառավարության 2006 թվականի 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն 2024 թվականի համար ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 44 տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ամբողջական փաթեթներ 165 ենթածրագրերով:

2024 թվականին ծրագրերի ընդհանուր նախահաշվային գումարը կազմում է **11 մլրդ 49 մլն դրամ** (ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինը կազմում 6 մլրդ 36 մլն դրամ՝ 54.6%, համայնքի բյուջեի ֆոնդային մասը՝ 4 մլրդ 917 մլն դրամ՝ 44.5% և այլ ներդրողներ 96 մլն դրամ՝ 0.9%):

Ըստ ոլորտների

Ծրագրի ոլորտը	**Ծրագրերի քանակ**	**Ծրագրի սկզբ. (դրամ)**	**Արդյունք**
Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	5	1,031,646,923	34 կմ, 18109 շահառու
Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	4	1,005,541,812	1319 հա, 1255 տնային տնտեսություն
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, ասֆալտապատում	8	3,729,254,653	18.7 կմ
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, սալարկմամբ, խճապատմամբ	2	518,344,970	8.6 կմ
Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	4	684,729,629	2641 լուսակիր 79.1 կմ երկարությամբ
Բնակավայրերի գազաֆիկացում	5	981,302,259	41.1 կմ
Նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում/նորոգում, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերում	3	780,087,589	280 երեխայի համար 217 գույք
Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	2	259,534,977	11205 քմ 1883 շահառու

նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում			
Մեքենասարքավորումների և գույքի ձեռքբերում	5	980,856,647	37 մեքենաս.
Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում	5	840,801,748	3678 քմ
Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում	1	236,814,825	3125 քմ
Ընդամենը	**44**	**11,048,916,032**	

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Կարեն Բաղիշյան

3. ՀՀ Շիրակի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի և առաջիկա ծրագրերի, ոռոգման պատշաճ կազմակերպման ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին

Մարզում 2024 թվականի բերքի տակ կատարվել է շուրջ 13500 հա աշնանացան ցորենի ցանք, որը ձմեռացման ընթացքում վնասներ չի կրել։

Տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 14-ի N 384-Լ որոշմամբ հաստատվել է «Բուսաբուծության աջակցության ծրագիրը», որը կնպաստի գարնանացանի ցանքատարածությունների ավելացմանը։ Նշված ծրագիրը հնարավորինս անթերի և անխափան իրականացնելու համար ս/թ մարտի 22-ին կազմակերպվել էր քննարկում ՀՀ էկոնոմիկայի նախարարության և համայնքապետարանների միջև։ Նշված ծրագրի շրջանակներում տրամադրվելու է փոխհատուցում հետևյալ սահմանաչափերով.

- հացահատիկային մշակաբույսերի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 70 000 դրամ, իսկ եգիպտացորենի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 85 000 դրամ
- հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 100 000 դրամ
- բազմամյա խոտաբույսերի (առվույտ, կորնգան) 1 հեկտար մակերեսի մշակության հաշվով՝ 110 000 դրամ

Պայմանավորված նախորդ տարվա գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բարձր բերքատվությամբ մարզի գյուղացիական տնտեսությունները հիմնականում ապահովված են

գարնանացանի սերմացուներով, ինչպես նաև կան անհատ տնտեսվարողներ ովքեր ներկրում են հավաստագրված սերմացուներ: Մարզում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ առկա է ավելի էժան գներով պարարտանյութեր:

Միաժամանակ հայտնում եմ, որ 2024 թվականին շարունակում են գործել գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության հետևյալ ծրագրերը.

- ՀՀ ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագիր
- ՀՀ 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր
- ՀՀ արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-2026 թվականների ծրագիր
- ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր
- ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագիր
- ՀՀ ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր
- Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր
- Գյուղատնտեսական ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր
- ՀՀ ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025 թվականների ծրագիր

Ոռոգման սեզոնի ընթացքում ոռոջման ջրի տրամադրման գործընթացն անխափան իրականացնելու նպատակով ս/թ մարտի 1-ից Շիրակի մայր ջրանցքով կատարվել է ջրի կուտակման աշխատանքներ Կառնուտի ջրամբարում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ Կառնուտի ջրամբարում այս տարի ունենք ավելի շատ կուտակված ջուր: Ներկայումս շարունակվում է Կառնուտի ջրամբարում ջրի կուտակման աշխատանքները՝ վարկյանում 2700 լիտր: Շիրակ ՋՕԸ-ի կողմից իրականացվել է մայր ջրանցքի մաքրման աշխատանքներ:

2024 թվականի հունվարի 25-ի N 106-Ն Հայաստանի Հանրապետության կառավարություն որոշմամբ փոփոխություն և լրացումներ է կատարվել ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 993-ն որոշման մեջ, որով առաջարկվում է նվազագույն պահանջներով բնակավայրերում կառուցել սպանդանոցային կետեր, որը նախատեսված կլինի փոքրաթիվ (5-7 գլուխ) կենդանիների ամենօրյա սպանդի համար:

Մարզում կայուն անասնահամաճարակային վիճակը պահպանելու նպատակով մեկնարկել է «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագիրը»: Ներկա պահին «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի անասնաբույժ մասնագետների կողմից իրականացվում են բրուցելոզ հիվանդության նկատմամբ ախտորոշիչ և էմկար հիվանդության նկատմամբ կանխարգելիչ միջոցառումները:

2024 թվականի «Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» ծրագրի շրջանակներում նախարարության կողմից ձեռք է բերվել մկնասպան թունանյութ, և հաշվի առնելով նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվելիք մշտադիտարկման արդյունքները՝ մարզի համայնքներին անհատույց կհատկացվի մկնասպան թունանյութ։

Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման 2023-2024թթ. համեմատական արդյունքները հետևյալն են.

	2023թ.	**2024 թ.**	**Աճ/նվազում (+/-)**
Խ.ե.կ. /հազ. գլուխ/	70082	67 819	**-2263**
որից՝ կովեր /հազ. գլուխ/	32356	31 580	**-776**
Խոզեր /հազ. գլուխ/	13421	16 685	**+3264**
Ոչխարներ և այծեր /հազ. գլուխ/	73674	78711	**+5037**
Թռչուն /հազ. թև/	379023	137 457	**-241566**

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ռոման Համայակյան

4. ՀՀ Շիրակի մարզում 2024 թվականին իրականացվելիք քաղաքաշինական ծրագրերի և հողաշինության բնագավառին վերաբերող հարցերի մասին։

Քաղաքաշինության ոլորտ.

Կրթական օբյեկտների շինարարություն

ՀՀ կառավարության 2023թ. նոյեմբերի 30-ի թիվ 2093-Ն որոշմամբ հաստատվել է «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը, որում ՀՀ Շիրակի մարզից ներառվել են թվով 30 դպրոցներ: Ընթացքի մեջ են 2021 թվականին մեկնարկած ՀՀ քաղաքաշինության կոմիտեի

պատվիրատվությամբ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն, Արեգնադեմ և Ախուրյան համայնքի Կապս բնակավայրերում փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի, ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ և Արևշատ բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզների շենքերի ինչպես նաև Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ 2021 թվականին մեկնարկած ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի «Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի և ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքները:

Նախատեսվում են

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ՝ 2024 թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 1 մլրդ. 140 մլն դրամ գումար ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի (250 մլն.դրամ), Աշոցք համայնքի Բավրա (250 մլն դրամ), Արթիկ համայնքի Հայրենյաց (320 մլն. դրամ) և Ամասիա համայնքի Բյուրակն (320 մլն դրամ) բնակավայրերում նոր կրթահամալիրների կառուցման, ինչպես նաև 3 մլրդ. 135 մլն. դրամ գումար՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 24, Արթիկ համայնքի Սարատակ, Փոքր Մանթաշ, Ամասիա համայնքի Ամասիա, Անի համայնքի Ջրափի, Սառնաղբյուր, Շիրակավան, Ախուրյան համայնքի Երազգավորս, Մայիսյան բնակավայրերում նոր դպրոցական շենքերի կառուցման համար:

2024 թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 500 մլն. դրամ գումար ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ջաջուռ, Կառնուտ, Աշոցք համայնքի Մուսայելյան, Արթիկ համայնքի Սարալանջ, Աշոցք համայնքի Ցողամարգ բնակավայրերի ուսումնական շենքերի վերանորոգման, ինչպես նաև նոր մարզադահլիճների կառուցման նպատակով:

Մշակութային և սպորտային օբյեկտների շինարարություն

Ընթացքի մեջ են «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրի կառուցման աշխատանքները ծրագրի արժեքը շուրջ 6.0 միլիարդ դրամ: 2023 թվականին իրականացվել են 1 միլիարդ 296 միլիոն 552 հազար դրամի աշխատանքներ: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2026 թվականին:

Առողջապահական օբյեկտների շինարարություն

2024թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 1 մլրդ. 24 մլն. դրամ գումար՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցման, 64 մլն. դրամ գումար՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 1 պոլիկլինիկայի վերակառուցման, 170 մլն. դրամ գումար՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկայի շենքի վերակառուցման, շուրջ 28-ական մլն. դրամ գումար ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն և Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայրերի ամբուլատորիաների շենքերի շինարարական աշխատանքներն իրականացնելու

նպատակով: Վերը նշված առողջապահական օբյեկտների շինարարությունների ծրագրերի ավարտը նախատեսված է 2026թ:

Ճանապարհաշինություն

1.ՀՀ Շիրակի մարզն ունի շուրջ 858,5 կմ երկարությամբ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ, որից միջպետական նշանակության՝ 114.2կմ, հանրապետական նշանակության՝ 249,1 կմ և մարզային (տեղական) նշանակության՝ 495,2կմ:

Մարզային նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների շրջանակներում 2023 թվականին, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ իրականացվել են 255.3 կմ երկարությամբ ընթացիկ ձմեռային պահպանման և 41.5 կմ երկարությամբ ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ: Աշխատանքները կրում են ընթացիկ բնույթ և գտնվում են պատշաճ հսկողության տակ:

2.ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ ՀՀ Շիրակի մարզում իրականացվում են թվով 8 ճանապարհաշինական ծրագրեր, որից 6-ը՝ 49.9 կմ երկարությամբ շուրջ 5.0 մլրդ դրամ գումարի շրջանակներում, 2-ը՝ 15.9 կմ երկարությամբ շուրջ 2.3 մլրդ դրամ գումարի շրջանակներում:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ ՀՀ Շիրակի մարզում իրականացվում են թվով 6 ճանապարհաշինական ծրագրեր՝ 7.6 կմ երկարությամբ շուրջ 2.8 մլրդ դրամ գումարի շրջանակներում: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

3.Ընթացքի մեջ են «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման աշխատանքները: 2023 թվականին շարունակվել են Տրանշ 3՝ Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի, 42 կմ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները:

ՀՀ Շիրակի մարզի 40 ներմարզային երթուղներից ներկայումս գործում են 33-ը:

Չեն սպասարկվում

- Աշոցք համայնքն ամբողջությամբ՝ 25 բնակավայր (4 երթուղի),
- Ամասիա համայնքի 19 բնակավայրից՝ 9-ը (1 երթուղի)
- Անի համայնքի 17 բնակավայրից՝ 6-ը (2 երթուղի)

ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում փաստագրված ոչ հիմնական շինությունների վերաբերյալ

ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N1601-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ համայնքների ղեկավարների կողմից լրամշակվել և 2023 թվականի փետրվարի 1-ի դրությամբ հաստատվել են բնակավայրերում պետական և համայնքային սեփականություն

հանդիսացող հողամասերում տեղադրված ոչ հիմնական շինությունների ցուցակները: Նշված ցուցակներում փաստագրված են եղել 2964 ոչ հիմնական շինություններ,

2024 թվականի հունվարի դրությամբ ոչ հիմնական շինությունների քանակը կազմում է 2884:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ 2023 թվականի սեպտեմբեր ամսին համայնքների ղեկավարների կողմից տարվել են աշխատանքներ 2008 թվականի դրությամբ հաստատված երկրաշարժից անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակների ճշգրտման ուղղությամբ: 2023 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ճշգրտված տվյալներով մարզում երկրաշարժից անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակներում դեռևս հաշվառված են 1227 ընտանիքներ, որից՝ ք. Գյումրի- 1016 ընտանիք, այլ բնակավայրեր- 211 ընտանիք:

ՀՀ Շիրակի մարզում առկա են 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող թվով 114 բազմաբնակարան շենքեր, որից՝

Գյումրի - 92 շենք (1961 բնակարան), Ախուրյան - 2 շենք (14 բնակարան), Արթիկ -12 շենք (331 բնակարան), Անի -2 շենք (21 բնակարան), Աշոցք -1 շենք (22 բնակարան), Ամասիա -5 շենք (82 բնակարան):

Հողաշինության ոլորտ

Համաձայն մարզի հողային հաշվեկշռի, մարզի վարչական տարածքը կազմում է 268027 հա, որն ամբողջությամբ ընդգրկված է մարզի համայնքների վարչական սահմաններում:

Ըստ 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմվող մարզի հողային հաշվեկշռի, մարզի վարչական տարածքի 78.7%-ը կամ 210955 հա-ը հանդիսանում են գյուղատնտեսական նպատակային նշանակության տարբեր հողատեսքերի հողամասեր: Գյուղատնտեսական նշանակության հողերը պակասել են շուրջ 21.42 հա-ով, որից՝ 1.025 հա-ը անցել է բնակավայրերի նպատակային նշանակության հողերի, 1.69 հա-ը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, 18..7 հա-ը՝ Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերի կատեգորիա:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը ըստ հողատեսքերի՝ ունեն հետևյալ բաշխվածությունը՝

վարելահողեր՝ 78142.5 հա,

բազմամյա տնկարքներ՝ 67.6 հա,

խոտհարքներ՝ 9832.4 հա ,

արոտներ՝ 112028.3 հա,

այլ հողատեսքեր՝ 10905.0 հա:

Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն է հանդիսանում **62641.4** հա-ը:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են **111792.7**հա, իսկ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը՝ **36511.8**հա:

Հողերի վարձակալություն

2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի համայնքների վարչական սահմաններում առկա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող և վարձակալության ենթակա **137 879.6** հա գյուղատնտեսական նշանակության հողերից օգտագործման է տրամադրված **51148.8** հա-ը (**37.0 %)՝ 202 մլն 875 հազ. դրամ տարեկան վարձավճարով**: Վարձակալության տրամադրված գյուղատնտեսական նշանակության 1 հա հողամասի միջին վարձավճարը մարզում կազմում է **4040** դրամ:

2024 թվականի հունվար-փետրվար ամիսներին մարզի թվով 2 համայնքներում անցկացված հողերի վարձակալության տրամադրման մրցույթների արդյունքում վարձակալության է տրամադրվել **34.18** հա համայնքային սեփականություն հանդիսացող հողեր՝ **494520 հազ**. դրամ վարձավճարով:

Հողերի օտարում

2024 թվականի հունվար-փետրվար ամիսներին մարզի թվով 3 համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում օտարվել է ընդամենը 1.11 հա համայնքային սեփականություն հանդիսացող հող: Վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է 24 մլն 120 հազ. դրամ: Ապահովվել է ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի նկատմամբ բարձր մակարդակ: Իսկ ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, օտարվել է 0.24 հա հող՝ 8 մլն 869 հազ. դրամ արժեքով:

Ապահովվել են օտարված հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցումները:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի պարտականությունները կատարող Էմիլ Պետրոսյան

5. **Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ Շիրակի մարզ տեղափոխված հայրենակիցներին աջակցելու նպատակով իրականացված աշխատանքների մասին:**

2024 թվականի ապրիլի 3-ի տվյալներով՝ Շիրակի մարզում հանգրվանել է Լեռնային ղարաբաղից բռնի տեղահանված 3819 քաղաքացի, **1038** ընտանիք։

Բաշխվածությունը համայնքներում հետևյալն է

7	Շիրակ	Գյումրի	2648	692
		Արթիկ	410	125
		Արխուրյան	354	93
		Անի	229	84
		Ամասիա	90	26
		Աշոցք	88	18
Ընդամենը			3819	1038

Կեցության համար հարմարեցված ընդհանուր տարածքներում տեղակայվել են բռնի տեղահանված **51** քաղաքացի. **42** անձ Գյումրի բժշկական կենտրոնի մասնաշենքում և **9** անձ Լանջիկում։

ԼՂՀ-ից բռնի տեղահանված 32 ընտանիք էլ 56 անձով բնակվում են Մարալիկի սոցիալական կացարաններում: (Սոցիալական կացարանների բնակիչներն իհարկե Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասության ներքո են, բայց՝ ամեն դեմքում մեր մարզում են և մեծ հաշվով պատասխանատվությունը դարձյալ մերն է)

- ✓ Մարզում հաշվառվել է 801 դպրոցական տարիքի և 138 նախադպրոցական տարիքի երեխաներ։
- ✓ Շիրակի մարզի դպրոցներում ուսումը շարունակում են 668 աշակերտ, որից՝ 431-ը Գյումրիում, 31-ը Աշոցքում, 70-ը Ախուրյանում, 44-ը Անիում, 74 -ը Արթիկում, 18-ը Ամասիայում։
- ✓ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և հանրակրթությունից դուրս մնացած կամ խուսափող երեխաներին հայտնաբերելու և հանրակրթություն վերադարձնելու նպատակով Շիրակի մարզպետի հանձնարարությամբ ստեղծված աշխատանքային խումբն, ըստ անհրաժեշտության համագործակցելով համապատասխան կառույցների հետ, այցելություններ է

իրականացրել Անի, Ախուրյան, Ամասիա և Աշոցք համայնքներ։ Աշխատանք է տարվել հանրակրթությունից դուրս մնացած կամ խուսափող երեխաների ընտանիքի հետ։

- ✓ ՀՀ Շիրակի մարզի բուհերում ուսումը շարունակում է 49 ուսանող. 39-ը Շիրակի պետական համալսարանում, 2-ը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղում, 6-ը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսրանի Գյումրու մասնաճյուղում, 2-ը Պրոգրես համալսարանում։

- ✓ ՀՀ Շիրակի մարզի թվով 24 բուժհաստատություններում հաշվառվել են 2915 քաղաքացի, որից՝ դեղորայք են ստացել, ստացիոնար բուժման և լաբորատոր-գործիքային հետազոտության են ուղեգրվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 821 քաղաքացի։

- ✓ ՀՀ Շիրակի մարզի բժշկական հաստատություններում ծննդաբերել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 14 հղի (7 տղա, 8 աղջիկ, 1-ը՝ զույգ)։ Համապատասխան բուժհաստատություններում հաշվառված է 30 հղի։

- ✓ Վարչության աշխատակիցների կողմից սույն թվականի ապրիլի 2-ի դրությամբ իրականացվել է թվով 406 ընտանիքի (1832 անձ) հրատապ կարիքների գնահատում։

- ✓ Մարզի բուժհաստատություններում աշխատանքի է ընդունվել 7 բուժաշխատող։

- ✓ Կրթական հաստատություններում՝ աշխատանքի է ընդունվել 14 ուսուցիչ։

- ✓ Չնայած Շիրակի մարզպետի հետ մշտական հանդիպումներին ու քննարկումներին՝ Մարտի 1-ին, Շիրակի մարզպետի աշխատակազմի պատասխանատուները բազմամարդ հանդիպում էին կազմակերպել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված շուրջ 300 անձանց հետ։ Հանդիպման ժամանակ աշխատակազմի ոլորտային պատասխանատուները ներկայացրեել են ինչպես մարզում իրականացված աշխատանքները, այնպես էլ ՀՀ կառավարության կողմից իրականացվող և առաջիկայում նախատեսվող ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն։

- ✓ Շիրակի մարզպետի հանձնարարությամբ՝ մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ս/թ. ապրիլի 1-ից սկսել են այցելություններ՝ Գյումրի համայնքում բնակվող Լեռնային Ղարաբաղից

բռնի տեղահանվածների ընտանիքներ։ Այցելությունների նպատակն է տեղում ծանոթանալ յուրաքանչյուր ընտանիքին հուզող հարցերին, գույքագրել վերջիններիս կարիքները, մարզպետի աշխատակազմի լիազորությունների շրջանակներում առկա խնդիրներին տալ հնարավոր լուծումներ, իսկ անհրաժեշտության դեպքում դրանք քննարկման առարկա դարձնել նաև համապատասխան մարմինների հետ։

- ✓ Ըստ կարիքների գնահատման՝ տրամադրվել են և շարունակվում են տրամադրվել հումանիտար օգնություն՝ սննդի, հիգենայի և կենցաղային պարագաների տեսքով՝ համագործակցելով տարբեր բարեգործական կազմակերպությունների հետ։

2024 թվականի առաջին եռամսյակում

- ✓ փետրվարի 21-ին ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայից ստացվել և բաշխվել է 540 արկղ հիգիենայի փաթեթ, 300 տաքացուցիչ, ինչպես նաև մեծ թվով հագուստ՝ բաճկոնների, տաբատների, գլխարկների և այլ պարագաների տեսքով տեսքով։
- ✓ Փետրվարի 28-ին Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից ստացվել է 261 արկղ սնունդ։
- ✓ 27-ին և 29-ին Սյունիքի մարզից ներկրվել և մասնակի բաշխվել է 12 տոննա ալյուր, 7,5 տոննա շաքարավազ, 2 տոննա աղ, 6 տոննա վերմիշել, 4 տոննա ձեթ, 1 տոննա կաթի փոշի։
- ✓ Մարտի 19 –ին ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիայից ստացվել և բաշխվել է 1587 արկղ սնունդ։

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Աննա Մարտիկյան